



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄՍԻԱՍՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԱՐՅԱԽԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՈՒ ՀՕՄԻ ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒ
ՅԻՇԱՏԱՍԿԻՆ**

Կիրակի, Փետրուար 24-ին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութեան:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի խնդրանքով, մեր եկեղեցիներուն մէջ յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Արցախեան Ազատամարտի ճամբուն ինկած նահատակներուն, ինչպէս նաեւ Սումկայթի մէջ 1988-ի Փետրուարին տեղի ունեցած վայրագութեանց զոհ բոլոր հայորդիներուն յիշատակին:

Նմանապէս Հայ Օգնութեան Միութեան Շրջանային Վարչութեան խնդրանքով, հոգեհանգիստ տեղի պիտի ունենայ ՀՕՄԻ բոլոր ննջեցեալ նուիրեալներուն յիշատակին: Այս առիթով մեր եկեղեցիներուն մէջ պիտի ընթերցուի Առաջնորդ Սրբազան Հօր պատգամը:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդի գաւակները ներկայ ըլլալու արարողութեանց:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AND
SPECIAL REQUIEM SERVICES AT ST. MARY'S CHURCH**

On Sunday, February 24th, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at St. Mary's Church in Glendale.

By the request of the Armenian Revolutionary Federation Western Region, special prayers will be offered during requiem service for martyrs of the Artsakh Liberation Movement and victims of the Sumgait Pogroms of February 1998. By the request of the Armenian Relief Society Regional Executive, prayers will also be offered during requiem service for departed members of the A.R.S. The Prelate's message on this solemn occasion will be read in all churches.

ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԻ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅԸ ԱՅՑԵԼԵՑ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու ժողովականութեան ներկայացուցիչներուն հետ նախօրօք ճշդուած ժամադրութեամբ, Լինսի Հիմնարկի նոր նախագահ Տիար Ճէյ Ռաքօ եւ փոխ նախագահ Տիար Յարութ Սասունեան Հինգշաբթի, 21 Փետրուարին այցելութիւններ տուին Ազգային չորս վարժարաններ, ծանօթանալու համար անոնց կրթական վիճակին ու զանազան ծրագիրներուն:



Առաջնորդ Սրբազանն ու Ազգ. Վարժարաններու հնամակալ Մարմինի ներկայացուցիչներ՝ Տեարք Մարք Կետիկեան, Վարդգես Թովմասեան եւ Տիկին Սօսի Յովսէփեան առաւօտեան ժամը 10ին հիւր ներկայացուցիչները դիմաւորեցին Ազգ. Ֆերահեան Երկրդ. վարժարանին մէջ: Այնուհետեւ, շրջապտոյտը ընդգրկեց Ազգ. Ռոգ եւ Ալեք Փիլիպոս Երկրդ.

Վարժարանը, Ազգ. Թիւֆէնքեան Մանկամտուրն ու Ազգ. Վահան եւ Անոյշ Շամլեան վարժարանները: Ազգ. Ռոգ եւ Ալեք Փիլիպոս վարժարանին մէջ կայացած հանդիպումին ներկայ էին նաեւ հնամակալ Մարմինի անդամներէն Տիկին Մակի Սարգունի ու վարժարանին Ուսումնական Մարմինի ներկայացուցիչներ:

Մեր վարժարաններու Տնօրէններն ու անձնակազմերու ներկայացուցիչները մասնակցեցան հիւրերու դիմաւորումին ու զանոնք հաղորդ դարձուցին ուսումնական աշխատանքներու ընթացքին ու բարգաւաճման ծրագիրներու: Ազգ. Ազգ. Ռոգ եւ Ալեք Փիլիպոս վարժարանի տնօրէնութիւնը նաեւ ճաշով հիւրասիրեց յարգելի հիւրերը:

Առաջին օրուան շրջապտոյտի աւարտին, Առաջնորդ Սրբազանը, ժողովականութեան ներկայացուցիչներն ու հիւր պաշտօնատարները հասան Ազգ. Առաջնորդարան: Առաջնորդ Սրբազանը անոնց ծանօթացուց նոր շէնքին բաժանմունքներն ու ընդհանրապէս Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ տարուող աշխատանքներուն շրջագիծը: Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէրներ յանձնեց Լինսի Հիմնարկութեան ներկայացուցիչներուն:

Ազգային վարժարաններ շրջապտոյտի երկրորդ հանգրուանը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Չորեքշաբթի, 27 Փետրուարին, եւ պիտի ընդգրկէ Ազգ. Արի Կիրակոս Մինասեան, Մեսրոպեան վարժարաններն ու Լեւոն եւ Յասմիկ Թալեան Մանկամտուրը:

PRESIDENT OF THE LINCY FOUNDATION VISITS PRELACY SCHOOLS AND HEADQUARTERS

On Thursday, February 21st, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, President of The Lincy Foundation Mr. Jay Rakow, and Senior Vice-President Mr. Harut Sassounian visited four local Prelacy schools, accompanied by Board of Regents Chair Mr. Mark Guedikian and Vice-Chair Dr. Albert Tomassian.

The visit began at 10:00 a.m at Ferrahian High School, and continued at Rose and Alex Pilibos High School, where lunch was hosted by the administration. The visits continued in the afternoon and covered Richard Tufenkian Pre-School and Vahan and Anoush Chamlian School. The purpose of the visits was to become more closely familiarized with the administration, students, activities, and projects of Prelacy day schools and to get a better understanding of the challenges they face.

Following the school visits the delegation arrived at the Prelacy headquarters where they were given a tour of the new premises and were acquainted with the various departments and undertakings of the Prelacy. Prior to their departure the Prelate presented the guests with mementos.

Visits to Ari Guiragos Minassian School, Armenian Mesrobian High School, and Levon and Hasmig Tavlian Pre-School will take place in the coming week.

ՌԻՉԸՐՏ ԳԱՐՈՒԱՆ ԿՐՏՍԵՐ ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ ԱՅՅԵԼԵՑԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ազգային բարերար Ռիչըրտ Գարուան Կրտսեր Երեքշաբթի, 19 Փետրուարին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Չաւակը՝ մեծանուն բարերար հանգուցեալ Ռիչըրտ Գարուանի, իր կողքին ունէր իր ազնիւ Տիկինն Քիմպըրլին, ու երկու դեռաստի դուստրերը:



Ռիչըրտ Գարուան Կրտսեր առաջին անգամ ըլլալով է որ կ'այցելէր Ազգ. Առաջնորդարանի նոր շէնքը, անոր վերակառուցումէն ետք: Ան Առաջնորդ Սրբազանին փոխանցեց իր մօր՝ Տիկին Թինա Գարուանի ողջոյնները, ծանօթացաւ շէնքի տարբեր բաժանմունքներուն ու աշխատանքի մարզերուն, եւ իր հիացումին կողքին՝ շնորհաւորութիւնները փոխանցեց Առաջնորդ Սրբազանին, ծրագիրին ամբողջացման առիթով:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց

Գարուլան ընտանիքին բարերարությունները, որոնք կը տրամադրուին Ազգային Առաջնորդարանիս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու ազգային կազմակերպութեանց ու Հայ Դատին: Ան յանուն մեր Թեմի ժողովականութեան՝ երախտագիտութիւն յայտնեց բարերար ընտանիքին, որ Առաջնորդարանի նոր շէնքի գլխաւոր բարերարներէն մէկն է:

Առաջնորդ Սրբազանը նախաճաշով հիւրասիրեց յարգելի հիւրերը, ապա յուշանուէրներ տուաւ անոնց:

Յիշեցնենք, որ Տիկին Թինա Գարուլան Ազգ. Առաջնորդարան այցելած էր նոր շէնքի կառուցման ամբողջացումէն ետք եւ ծանօթացած էր անոր բաժանմունքներուն ու յարկին տակ տարուող աշխատանքներուն:

BENEFACTOR RICHARD CAROLAN JR. AND FAMILY VISIT THE WESTERN PRELACY

On the morning of Tuesday, February 19th, Mr. Richard Carolan Jr., accompanied by his wife Kimberly and two daughters, visited the Western Prelacy where he was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. Mr. Carolan is the son of the late Prelacy benefactor Mr. Richard Carolan and Mrs. Tina Carolan, who visited the Prelacy last March.

During his first visit to the headquarters since the renovation, Mr. Carolan became more closely acquainted with the various departments and activities of the Prelacy, congratulated the Prelate on the successful realization of the building project, and conveyed his mother's well wishes to the Prelate.

The Prelate highly commended the Carolan family for their enduring benefaction to the Prelacy, the Catholicosate of the Great House of Cilicia, various Armenian organizations and the Armenian Cause, and expressed his gratitude to the family, who are also one of the grand benefactors of the building, on behalf of the larger Prelacy family

The Prelate also hosted the family to breakfast and presented them with a memento prior to their departure.



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ

Յառաջիկայ Չորեքշաբթի, Փետրուար 27-ը Միջինք է:

Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ կը շարունակուին Մեծ Պահոց Արեւագալի եւ Հսկումի ժամերգութիւնները: Միջինքի առիթով, արարողութեանց աւարտին, եկեղեցիներու սրահներուն մէջ տեղի պիտի

ունենան Տիկնանց Միութեանց եւ ԶՕՄ-ի կազմակերպած Միջինքի ճաշկերոյթները:

Առաջնորդ Սրբազան Զայրը պիտի հանդիսապետէ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Արեւազալի ժամերգութեան եւ պիտի տայ իր պատգամը: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ Տիկնանց Միութեան կազմակերպած Միջինքի ճաշկերոյթին:

PRELATE TO PRESIDE OVER SUNRISE SERVICE AND MICHINK LUNCHEON AT ST. MARY'S CHURCH

On the occasion of Mid-Lent, or Michink, which is on Wednesday, February 27th, Sunrise services will take place in all Prelacy Churches followed by luncheons organized by local parish Ladies Auxiliary Guilds and A.R.S. chapters.

The Prelate will preside over the Sunrise service at St. Mary's Church and convey his message, following which he will preside over the Michink luncheon.

ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Զօր, Մեծ Պահոց հսկումի արարողութիւն պիտի կատարուի Ազգային Առաջնորդարանի «Ս. Աշխէն եւ Ս. Տրդատ» մատրան մէջ, Շաբաթ, Մարտ 1-ին, երեկոյեան ժամը 6-ին:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը մասնակցելու հոգեպարար արարողութեան:

PRELATE TO PRESIDE OVER VIGIL SERVICE AT THE PRELACY CHAPEL

On the evening of Saturday, March 1st, Lenten vigil services will take place at the Prelacy "St. Dertad and St. Ashkhen" Chapel. The Prelate will preside over the service, which will begin at 6:00 p.m., and will deliver the sermon.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԱԽԱԳԱՅԵՑ ԵԼԵՆԱ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ-ՉԵԼԵԱՐՈՎԱՅԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, Փետրուար 19ին, Զոլիվուտ Զիլզի Forest Lawn գերեզմանատան մէջ հողին յանձնուեցաւ Զայ Յեղափոխական

Դաշնակցութեան հիմնադիրներէն՝ Քրիստափոր Միաքայլեւեանի թոռնուհին՝ Ելենա Միքայլեւեան-Չելեաբովա:

Առաջնորդ Սրբազանը նախագահեց թաղմանական արարողութեան եկեղեցւոյ կարգին, եւ իր ցաւակցական խօսքը ուղղեց հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան մեծ ընտանիքին:

PRELATE PRESIDES OVER FUNERAL SERVICE FOR YELENA MIKAELIAN-CHELIAPOVA

On Tuesday, February 19th, Yelena Mikaelian-Cheliapova, the granddaughter of one of the founders of the Armenian Revolutionary Federation Kristapor Mikaelian, was laid to rest at Hollywood Hills Forest Lawn.

The Prelate presided over the funeral service at the Forest Lawn Memorial Chapel and conveyed his condolences to the family of the deceased and to members of the A.R.F.